ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2796-Ա « 01 » հունիսի 2026թ.

ՀԱՂԹԱՆԱԿ ՏԵՂԱՄԱՍ Հ.8-22, ՀԱՂԹԱՆԱԿ ՏԵՂԱՄԱՍ Հ.7-18 ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ 13-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.20 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սեյրան և Ղրիմյա Զախարյանների լիազորված անձ Ալբերտ Կանդալյանի դիմումը՝ Հաղթանակ տեղամաս հ.8-22 /վարելահող/, Հաղթանակ տեղամաս հ.7-18 /խաղողի այգի/ և Հաղթանակ 13-րդ փողոց հ.20 /տնամերձ/ հասցեներում գտնվող հողամասերի սահմանները ճշտելու և հատակագծեր թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել հողի սեփականության իրավունքի 10.01.1995թ. հ.Ա003849 պետական ակտը, 2025 թվականի հուլիսի 18-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.18932 և հ.18933 վկայագրերը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ տեղամաս հ.8-22, Հաղթանակ տեղամաս հ.7-18 և Հաղթանակ 13-րդ փողոց հ.20 հասցեներում գտնվող հողամասերի փաստացի մակերեսները կազմում են համապատասխանաբար՝ 4753.0քմ, 2494.0քմ և 380.68քմ, պետական ակտում ամրագրված՝ 4800.0քմ, 2600.0քմ և 400.0քմ մակերեսների փոխարեն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի Հաղթանակ տեղամաս հ.8-22 և Հաղթանակ տեղամաս հ.7-18 հասցեներում գտնվող համապատասխանաբար՝ 4753.0քմ և 2494.0քմ մակերեսներով հողամասերը գտնվում են 12-րդ գոտում, իսկ Հաղթանակ 13-րդ փողոց հ.20 հասցեում գտնվող 380.68քմ մակերեսով հողամասը՝ 9-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 19.02.2026թ. հ.Դ-7006-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Հաղթանակ տեղամաս հ.8-22 /վարելահող/, Հաղթանակ տեղամաս հ.7-18 /խաղողի այգի/ և Հաղթանակ 13-րդ փողոց հ.20 /տնամերձ/ հասցեներում գտնվող հողամասերի սահմանները որոշվում են համապատասխանաբար՝ 4753.0քմ, 2494.0քմ և 380.68քմ մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246